ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4639-Ա «14» նոյեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐՆ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1.1-րդ մասով՝

1.Անհետաձգելի համարել.

1) «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մոսկովյան փողոցի հ.40 հասցեում գտնվող Հովհաննես Թումանյանի տուն թանգարանի նորոգման, երկրորդ մասնաշենքի քանդման և նորի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

2) «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոցի հ. 47/6 հասցեում ալյումինի ձուլակտորներից տարբեր արտադրատեսակների արտադրության նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

3) «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արտաշատի խճուղի հ. 49 հասցեում հասարակական նշանակության շինությունների՝ մեծածախ առևտրի սրահի և առևտրա-հասարակական շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

4) «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց հ. 38 հասցեում Միքայել Նալբանդյանի անվան թիվ 33 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

5) ««Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» համայնքային հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ